<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>“Վորլդ վիժն ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գեղարքունիքի մարզի Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն ՊՈԱԿ-ի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի հետ համագործակցելով:</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի “Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” հայաստանյան կենտրոնական գրասենյակի և վերջինիս՝ Գավառի Տարածքային Զարգացման Ծրագրի գրասենյակի կողմից: “Վորլդ վիժն ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</td></tr>
</table>

“Վորլդ վիժն ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 298 -Ա**
**քաղ. Երևան**

# «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ԵՎ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 18-ի N 3/3.8-2/3926-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մարտի 18-ի N 02/1613-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 20-ի N ՎՄ/3-4/7432-14 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի մարտի 19-ի N 01/14.1/840-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1,748,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Արագածոտնի մարզի Սարալանջ և Ծաղկաշեն համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արա-Արաքս գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08616945) 2014 թվականի փետրվարի 11-ին կնքված N WVA/APAR ADP/CM-14/002/LOT1/FY14 պայմանագրում (2014 թվականի մարտի 28-ի N WVA/APAR ADP/CM-14/002/LOT1/01/FY14 համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 1,748,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
ծրագրի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

11 փետրվարի 2014թ.

## «Շինարարական նյութերի մատակարարում Արագածոտնի մարզի Սարալանջ և Ծաղկաշեն համայքներ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Բարելավել Ապարանի տարածաշրջանի Սարալանջ և Ծաղկաշեն համայնքների ոռոգման ջրացծերի վիճակը: |
| 2 | Ծրագրի բարեգործական ողակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արագածոտն մարզի Սարալանջ և Ծաղկաշեն համայնքներում:<br>Բնագավառը՝ *սոցիալական* |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1,748,000 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար) դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Արագածոտն մարզի Սարալանջ և Ծաղկաշեն համայնքներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 11 փետրվարի 2014թ. – 30 մայիսի 2014թ. |

<table>
<tr><td>9</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>Ծրագրի շրջանակներում, մատակարարվելու է շինանյութ ստորև ներկայացված աղյուսակին համապատասխան.
<table>
<tr><td>N</td><td>Ծրագրերի անվանումը</td><td>Ժամկետները</td><td>Անհրաժեշտ ֆինանսական միջո ների ծավալը</td></tr>
<tr><td></td><td>Սարալանջ և Ծաղկաշեն համայնքների ոռոգման ցանցերի վերանորոգման համար:</td><td>11 փետրվարի 2014թ. – 30 մայիսի 2014թ.</td><td>1,748,000</td></tr>
<tr><td>1.</td><td>Ընդամենը:</td><td></td><td>1,748,000</td></tr>
</table></td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>
<table>
<tr><td>N</td><td>Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը</td><td>Ձեռք բերվող ծավալները</td><td>Նախատեսվող գինը</td></tr>
<tr><td>1.</td><td>Երկաթբետոնե առվի (կիսախողովակի) մատակարարում և տեղադրում</td><td>Վերանորոգման նախահաշիվ</td><td>1,748,000</td></tr>
<tr><td>2.</td><td>Ընդամենը:</td><td></td><td>1,748,000</td></tr>
</table>
Շինանյութի մատակարարումն իրականացնող կազմակերպության՝ «ԱՐԱ - ԱՐԱՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ կնքվել է համապատասխան պայմանագիր: Շինանյութի մատակարարումը կիրականացվի նշված ընկերության հետ կնքված շինարարական նյութերի մատակարարման պայմանագրին համապատասխան: Պայմանագրի ընդհանուր արժեքն է 1,748,000 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար) դրամ:</td></tr>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական ինքնակառավարման մարմինների և դպրոցների հետ համատեղ:</td></tr>
<tr><td>13</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Ծրագրի Վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող՝ «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի և Տարածքային Զարգացման Համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Լիանա Սարգսյան

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտնի մարզային ծրագրերի ղեկավար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**17 ապրիլի 2014 թվականի N Մ- 299 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի ապրիլի 11-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՅՈԹ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 18-ի N 3/3.8-1/3927-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մարտի 18-ի N 02/1611-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 20-ի N ՎՄ/3-4/3114-14 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի մարտի 19-ի N 01/14.1/841-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 15,726,861 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Արագածոտնի մարզի յոթ համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալեն-Էլեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04423145) 2014 թվականի փետրվարի 11-ին կնքված N WVA/APAR ADP/CM-14/002/LOT2&4/FY14 պայմանագրում (2014 թվականի մարտի 28-ի N WVA/APAR ADP/CM-14/002/LOT2&4-01/FY14 համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 15,726,861 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
ծրագրի տնօրեն՝ Ժիրայր Եգիյան

14 ապրիլի 2014թ.

## «Շինարարական նյութերի մատակարարում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի յոթ համայնքներին»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Բարելավել Ապարանի տարածաշրջանի Եղիպատրուշ համայնքի մշակույթի կենտրոնի, Լուսագյուղ համայնքի մանկապարտեզի, Ափնա համայնքի համայնքային կենտրոնի և գրադարանի, Չորագլուխ համայնքի դպրոցի, Արայի համայնքի դպրոցի, Թթուջուր համայնքի ոռոգման ջրագծի և Ապարան համայնքի սպորտդպրոցի ֆիզիկական պայմանները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արագածոտն մարզի Եղիպատրուշ, Լուսագյուղ, Ափնա, Չորագլուխ, Արայի, Թթուջուր, Ապարան համայնքներում:<br>Բնագավառ՝ *մշակութային, սոցիալական և կրթական* |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 15,726,861 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր քսանվեց հազար ութ հարյուր վաթսունմեկ) դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Արագածոտն մարզի Եղիպատրուշ, Լուսագյուղ, Ափնա, Չորագլուխ, Արայի, Թթուջուր, Ապարան համայնքներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողություն | 10 փետրվարի – 30 մայիսի, 2014թ. |

<table>
<tr><td>9</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>Ծրագրի շրջանակներում, մատակարարվելու է շինանյութ ստորև ներկայացված աղյուսակին համապատասխան.
<table>
<tr><th>N</th><th>Ծրագրերի անվանումը</th><th>Ժամկետները</th><th>Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</th></tr>
<tr><td>1.</td><td>Եղիպատրուշ համայնքի մշակույթի կենտրոնի, Լուսագյուղ համայնքի մանկապարտեզի, Ափնա համայնքի համայնքային կենտրոնի և գրադարանի, Չորագլուխ համայնքի դպրոցի, Արայի համայնքի դպրոցի, Թթուջուր համայնքի ոռոգման ջրագծի և Ապարան համայնքի սպորտդպրոցի վերանորոգում:</td><td>10 փետրվարի – 30 մայիսի, 2014թ.</td><td>15,726,861</td></tr>
<tr><td>2.</td><td>Ընդամենը:</td><td></td><td>15,726,861</td></tr>
</table></td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>
<table>
<tr><th>N</th><th>Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը</th><th>Ձեռք բերվող ծավալները</th><th>Նախատեսվող գինը</th></tr>
<tr><td>1.</td><td>Շինանյութի մատակարարում՝ Եղիպատրուշ համայնքի մշակույթի կենտրոն, Լուսագյուղ համայնքի մանկապարտեզ, Ափնա համայնքի համայնքային կենտրոն և գրադարան, Չորագլուխ համայնքի դպրոց, Արայի համայնքի դպրոց, Թթուջուր համայնքի (ոռոգման ջրագիծ) և Ապարան համայնքի սպորտդպրոց՝ վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար:</td><td>Վերանորոգման նախահաշիվ՝ Հավելված 1,1</td><td>15,726,861</td></tr>
<tr><td>2.</td><td>Ընդամենը:</td><td></td><td>15,726,861</td></tr>
</table>
Շինանյութի մատակարարումն իրականացնող կազմակերպության՝ «Ալեն Էլեն» ՍՊԸ-ի հետ կնքվել է համապատասխան պայմանագիր: Շինանյութի մատակարարումը կիրականցվի կազմակերպության հետ կնքված շինարարական նյութերի մատակարարման պայմանագրին համապատասխան 15,726,861 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր քսանվեց հազար ութ հարյուր վաթսունմեկ) դրամ արժողությամբ:</td></tr>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12</td><td>Համագործակցությունը</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ | մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական ինքնակառավարման մարմինների և դպրոցների հետ համատեղ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի Վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի և Տարածքային Զարգացման Համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար`

Շաղիկ Մարուխյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 ապրիլի 2014 թվականի N Մ - 300 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԿՈՎԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 28-ի N 3/3.8-2/4761-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մարտի 28-ի N 02/2009-14, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի մարտի 27-ի N ՍԿ/ԳՂ-2/1496-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-4/3323-14 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի մարտի 25-ի N 01/13/911-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3,624,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում կովերի արհեստական սերմնավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՔԱՐԴ Ագրոսերվիս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555961) 2014 թվականի փետրվարի 20-ին կնքված՝ N WVA/APAR/SER/01/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արհեստական սերմնավորման համար անհրաժեշտ սարքավորումների և պարագաների մատակարարում և կովերի սերմնավորում՝ 3,624,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի Տնօրեն Ժիրայր Էդիլյան
Մարտի 20, 2014թ.

# «ՀՀ Արագածոտն մարզի կովերի արհեստական սերմնավորում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Բարելավել Արագածոտն մարզի անասնագլխաքանակի կաթնատվությունը և մսատվությունը՝ իրականացնելով կովերի անվճար արհեստական սերմնավորում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան, Արագած, Շենավան, Հարթավան, Երնջատափ, Վարդենիս, Վարդենուտ, Արայի, Ձորագլուխ, Թթուջուր, Չքնաղ, Կայք, Նիգավան, Ծաղկաշեն, Եղիպատրուշ, Լուսագյուղ, Սարալանջ, Քուչակ, Շողակն և Ափնա:<br>Բնագավառը՝ գյուղատնտեսություն: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3.624.500 (երեք միլիոն վեց հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Ապարան, Արագած, Շենավան, Հարթավան, Երնջատափ, Վարդենիս, Վարդենուտ, Արայի, Ձորագլուխ, Թթուջուր, Չքնաղ, Կայք, Նիգավան, Ծաղկաշեն, Եղիպատրուշ, Լուսագյուղ, Սարալանջ, Քուչակ, Շողակն և Ափնա համայնքները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 20.02.2014թ. – 15.08.2014թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | **Միջոցառումների նկարագրությունը:** Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանում 450 կովերի արհեստական սերմնավորման իրականացում<br>**Ժամկետները:** փետրվար - օգոստոս 2014թ.<br>**Անհրաժեշտ ֆինանս. միջոցներ:** 3.624.500 (երեք միլիոն վեց հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի ընթացքում 3.624.500 (երեք միլիոն վեց հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի շրջանակներում կիրականացվի 450 կովերի արհեստական սերմնավորում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան, Արագած, Շենավան, Հարթավան, Երնջատափ, Վարդենիս, Վարդենուտ, Արայի, Ձորագլուխ, Թթուջուր, Չքնաղ, Կայք, Նիգավան, Ծաղկաշեն, Եղիպատրուշ, Լուսագյուղ, Սարալանջ, Քուչակ, Շողակն և Ափնա համայնքներում: Աշխատանքներն իրականացվելու են ՔԱՐԴ Ագրոսերվիս ՓԲԸ կողմից:<br>Ըստ որում՝ 1 374 500 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի շրջանակներում ձեռք կբերվի անհրաժեշտ նյութեր և պարագաներ, իսկ 2 250 000 (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ նախատեսված է վճարել սերմնավորման գործընթացը կազմակերպող տեխնիկներին՝ իրենց ծառայության դիմաց: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության կառույցների / Ապարանի տարածաշրջանի Ապարան, Արագած, Շենավան, Հարթավան, Երնջատափ, Վարդենիս, Վարդենուտ, Արայի, Ձորագլուխ, Թթուջուր, Չքնաղ, Կայք, Նիգավան, Ծաղկաշեն, Եղիպատրուշ, Լուսագյուղ, Սարալանջ, Քուչակ, Շողակն և Ափնա համայնքների հետ համատեղ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի տարածքային զարգացման համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Լիանա Սարգսյան
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտնի մարզի զարգացման ծրագրերի ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**11 ապրիլի 2014 թվականի N Մ - 301 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 3-ի N 3/3.8-2/5075-14, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի ապրիլի 7-ի N 1/06/353-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 4-ի N ՎՄ/3-4/3810-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով ձեռքբերված և իր հասցեով ստացված ֆուտբոլի գնդակների (200 տեղ, 2,280 կգ ընդհանուր քաշով, 13,544.58 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 503 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը (բաշխման ցանկը կցվում է):

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հայաստան համահայկական հիմնադրամի պատկերանիշներով
ֆուտբոլի գնդակների
Հայաստանի 10 մարզերի հանրակրթական / *միջնակարգ, հիմնական, ավագ* / դպրոցների միջև բաշխման ցանկը

4/11.1

| | Մարզ | Դպրոցներ | Գնդակների թիվը |
|---|---|---|---|
| 1. | Վայոց Ձոր | 48 | 197 |
| 2. | Սյունիք | 119 | 411 |
| 3. | Արագածոտն | 119 | 464 |
| 4. | Արարատ | 112 | 593 |
| 5. | Արմավիր | 114 | 572 |
| 6. | Շիրակ | 152 | 612 |
| 7. | Տավուշ | 79 | 393 |
| 8. | Լոռի | 153 | 641 |
| 9. | Կոտայք | 103 | 511 |
| 10. | Գեղարքունիք | 124 | 554 |
| | | | |
| 11. | Հայաստան համահայկական հիմնադրամ | Հետագայում բաշխելու համար | 50 |
| | Ընդամենը՝ | 1 123 դպրոց | 4. 948գնդակ |
| | | | |

*Դիտարկում*
Վերոհիշյալ ցուցակը կազմվել է ՀՀ 10 մարզերի մարզպետարաններից վերցված վերջին տվյալների հիման վրա և հետևյալ համամասնությամբ.

-Մինչև 10 աշակերտ ունեցող դպրոցներին 1 գնդակ
- 10-50 2 գնդակ
- 50-100 3 գնդակ
- 100-150 4 գնդակ
- 150-250 5 գնդակ
- 250 և ավելի 7 կամ 6 գնդակ

Մասնավորապես՝

- Վայոց Ձոր, Սյունիք, Արագածոտն, Տավուշ, Լոռի մարզերի դրոցներում բաշխվող գնդակների առավելագույն քանակը կլինի 7-ական,.
- Արարատի, Արմավիրի, Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի դպրոցներում բաշխվող գնդակների առավելագույն քանակը կլինի 6-ական:

Այսպիսով, Հայաստանի բոլոր մարզերի բոլոր երեխաներին բաժին կհասնի այս հրաշալի նվերից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2014 թվականի N Մ- 302 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 3-ի N 3/3.8-2/5135-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 3-ի N ԴԴ/22/3080-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 7-ի N ՎՄ/3-4/3883-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ Հայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված դեղորայքի և բժշկական պարագաների (7 տեղ, 1,478 կգ ընդհանուր քաշով, 25,946.62 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 6750 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՑԱՆԿ

ԱՄՆ ՄՀՀ Mebs Global Reach կազմակերպության միջոցով
2014/31/1016 փոխադրման ամփոփագրով ներմուծված ապրանքների

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Կշիռը, բրուտտո, կգ | Կշիռը, նետտո, կգ | Արժեքը, ԱՄՆ դոլար | Քանակը, հատ | Ծագման երկիրը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Դեղորայք, որից | 63,5 | 57,5 | 2684,67 | 1 պալետ | |
| | Տամսուլոսին հիդրոքլորիդ 0,4 մգ | | | 126,55 | 30 կապսուլ | Իսրաել |
| | Ասպիրին | | | 2553,6 | 960 շիշ | ԱՄՆ |
| | Լիդոկաին հիդրոքլորիդ 1% 5 մլ | | | 4,52 | 4 սրվակ | ԱՄՆ |
| 2. | Բժշկական փաթաթան ոտքի համար | 259,9 | 219,9 | 10702,73 | 1 պալետ | ԱՄՆ |
| 3. | Մեզի տարա խողովակով | 140,6 | 120,6 | 1367,2 | 1 պալետ | Մալայզիա |
| 4. | Մեկանգամյա օգտագործման բժշկական պարագաներ՝ սավաններ և թղթյա պարագաներ | 299,3 | 269,3 | 7054,97 | 1 պալետ | ԱՄՆ |
| 5. | Մեզի տարա | 270,3 | 250,3 | 1676,17 | 1 պալետ | ԱՄՆ |
| 6. | Տակդիր | 280,7 | 240,7 | 1296 | 1 պալետ | ԱՄՆ |
| 7. | Բժշկական ապրագաներ | 163,7 | 148,7 | 1164,88 | 1 պալետ | |
| | Բժշկական սավան | | | 173,13 | | ԱՄՆ |
| | Տակդիր | | | 255,36 | | ԱՄՆ |
| | Խոնավ անձեռոցիկ | | | 736,39 | | ԱՄՆ |
| | Ընդամենը | 1478 | 1307 | 25946,62 | | |

ՀՀ-ում ԼՂՀ ՄՆ
վարչատնտեսական բաժնի պետ
Կ. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 303 -Ա**
**քաղ. Երևան**

## «ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 26-ի N 3/3.8-2/4589-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 25-ի N ՎՄ/3-4/3297-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Լևոն Հայրապետյանի կողմից «Լևոն Հայրապետյան» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված կահավորման և տնտեսական ապրանքների (92 տեղ, 2,268 կգ ընդհանուր քաշով, 81,901.13 ԱՄՆ-ի դոլար արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 3206 ԱՄՆ-ի դոլար, Սյունիքի ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանքի համայնքում կառուցվող ռազմական ուսումնարանի կահավորման և տնտեսական կարիքների համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 304 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 25-ի N 3/3.8-2/4530-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 25-ի N ՎՄ/3-4/3263-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված տարբեր չափսերի գրանիտե սալերի (37,680 կգ ընդհանուր քաշով, 20,691.20 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 2,502,000 դրամ, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա, նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա, դեկտեմբերի 6-ի N Մ-1172-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1246-Ա և 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-122-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 305 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 4-ի N 3/3.8-2/5252-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 7-ի N ՎՄ/3-4/3887-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա, նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա և դեկտեմբերի 6-ի N Մ-1172-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1246-Ա և 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-122-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի 8-րդ կետում «01.03.2013թ. – 31.12.2013թ.» բառերը փոխարինել «01.03.2013թ. – 30.04.2014թ.» բառերով:

2. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված օդափոխության և ջեռուցման սարքավորումների (1,249 կգ ընդհանուր քաշով, 14,100 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1,305,000 դրամ, ՄՃՓ տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 306 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 26-ի N 3/3.8-2/4587-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մարտի 24-ի N ԴԴ/22/2643-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-4/3314-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բելգիայի ՆԱՖ ասոցիացիայի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը (1 տեղ, 0.5 կգ ընդհանուր քաշով, 860 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 222 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 307 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱ-ԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆի-նանսների նախարարության 2014 թվականի մարտի 25-ի N 3/3.8-2/4416-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-4/3312-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-ժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մազնոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2014 թվականի մարտի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արմավիրի մարզի Վանանդ, Երվանդաշատ և Արագածոտնի մարզի Արտենի համայնքների համար խաղահրապարակի պարագաների պատրաստում և տեղադրում՝ 2,689,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 308 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 26-ի N 3/3.8-2/4588-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-4/3317-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա, 2012 թվականի նոյեմբերի 15-ի N Մ-919-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոնա և Արա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00054623) 2014 թվականի մարտի 17-ին կնքված N 2-2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արաբկիր» ԲՀ-ԵԴՍԻ A մասնաշենքի առաջին հարկում անհետաձգելի բուժօգնության բաժանմունքի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 31,245,627 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 309 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի N Մ-359-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 20-ի N 3/3.8-2/4140-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 24-ի N ՎՄ/3-4/3199-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անի Բեզիկյան» երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-359-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ. Լամբարյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06800406) 2014 թվականի մարտի 11-ին կնքված՝ N 03/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընդլայնման շինարարական աշխատանքների իրականացում՝ 62,643,678 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 310 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 ապրիլի 1-ի N 3/3.8-2/4880-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-4/3722-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01505315) 2014 թվականի փետրվարի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կոնֆերանս-սրահի տրամադրում՝ 133,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 311 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 103 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՆԻՔԻ ՀԻՄՆԱ-ՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 7-ի N 3/3.8-1/5431-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 8-ի N 02/2277-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի ապրիլի 8-ի N ՖՐ/ԱնՄ-4/2251-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 4-ի N ՎՄ/3-4/3865-14 ու Երևանի քաղաքապետի 2014 թվականի ապրիլի 3-ի N 02/16-20169-ի եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 770,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի թիվ 103 մանկապարտեզի տանիքի հիմնանորոգման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2014 թվականի մարտի 18-ին կնքված N ՀՀ/ՆՆ-02/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«02» ապրիլի 2014թ.

# «Հայաստանի Հանրապետության Երեւան քաղաքի թիվ 103 մանկապարտեզի տանիքի հիմնանորոգման նախագծում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Երևան քաղաքի թիվ 103 մանկապարտեզն այցելող երեխաների կեցության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը .. | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Երևան քաղաք, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 770.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Երևանի թիվ 103 մանկապարտեզը |
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ ապրիլի 18 -ից մինչեւ 2014թ.հունիսի 18-ը: |



| | | |
|---|---|---|
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՀԳԾՆ» ՍՊԸ-ի կողմից Երևանի թիվ 103 մանկապարտեզի տանիքի հիմնանորոգման նախագծում՝ 700.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: Նախատեսվում է նաեւ նախագծի փորձաքննություն՝ 70.000,00 դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 312 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 9-ի N 3/3.8-2/5517-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 8-ի N 02/2278-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի ապրիլի 7-ի N 04/07-1/3614-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 9-ի N ՎՄ/3-4/4176-14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի ապրիլի 10-ի N 01/13.3/1138-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,024,400 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված N ՀՀ-Կ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում՝ 1,024,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«04» ապրիլի 2014թ.

## «ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մեկ դասարանը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, Իջևան քաղաք, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.024.400,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցը |



| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ. ապրիլի 01-ից մինչեւ 2014թ. հուլիսի 01-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի թիվ 5 դպրոցի համար պայմանագրի թիվ 1 հավելվածում թվարկված գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 1.024.400,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության և կրթության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 313 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 7-ի N 3/3.8-2/5425-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 7-ի N 02/2245-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 4-ի N ՎՄ/3-4/3808-14 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 2-ի N 01/14.2986 -14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1,740,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Արագածոտնի մարզի Լուսագյուղ համայնքին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՌՈՍ Պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00651907) 2014 թվականի մարտի 25-ին կնքված N WVA/Order #1-APAR/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 1,740,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի Տնօրենի պաշտոնակատար
Սուրեն Սաղաթելյան
Մարտի 28, 2014թ.

## «ՀՀ Արագածոտն մարզի Լուսագյուղ համայնք շինարարական նյութերի մատակարարում»

# ԾՐԱԳԻՐ

<table>
<tr><td>1</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Բարելավել Արագածոտն մարզի Լուսագյուղ համայնքի խմելու ջրագծի վիճակը:</td></tr>
<tr><td>2</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</td></tr>
<tr><td>3</td><td>Բարեգործը</td><td>«Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.)</td></tr>
<tr><td>4</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755</td></tr>
<tr><td>5</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Լուսագյուղ համայնք:<br>Բնագավառը՝ <u>սոցիալական</u></td></tr>
<tr><td>6</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1.740,000 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:</td></tr>
<tr><td>7</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Լուսագյուղ համայնքը:</td></tr>
<tr><td>8</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>25.03.2014թ. – 15.09.2014թ.</td></tr>
<tr><td>9</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>
<table>
<tr><th>Միջոցառումների նկարագրությունը</th><th>ժամկետները</th><th>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</th></tr>
<tr><td>Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Լուսագյուղ համայնքի խմելու ջրագծի վերանորոգում:</td><td>մարտ - օգոստոս 2014թ.</td><td>1.740,000</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>
<table>
<tr><th>N</th><th>Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը</th><th>Ձեռք բերվող ծավալները</th><th>Նախատեսվող գինը</th></tr>
<tr><td>1.</td><td>Պոլիէթիլենային խողովակ խմելու ջրի համար</td><td>Հավելված 1</td><td>1.740,000</td></tr>
<tr><td></td><td></td><td>Ընդամենը:</td><td>1.740,000</td></tr>
</table>
Շինանյութի մատակարարումն իրականացնող կազմակերպության՝ «Ռոս Պլաստ» ՍՊԸ-ի հետ կնքվել է համապատասխան պայմանագիր: Շինանյութի մատակարարումը կիրականցվի կազմակերպության հետ կնքնված շինարարական նյութերի մատակարարման պայմանագրին համապատասխան՝ 1.740,000 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ արժողությամբ:
</td></tr>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Լուսագյուղ համայնքի տեղական իշխանության կառույցների հետ համատեղ:</td></tr>
<tr><td>13</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի տարածքային զարգացման համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</td></tr>
</table>

Լիանա Սարգսյան
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտնի մարզի զարգացման ծրագրերի ղեկավար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 ապրիլի 2014 թվականի N Մ - 314 -Ա**

**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 7-ի N 3/3.8-2/5432-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 7-ի N 02/2244-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 4-ի N ՎՄ/3-4/3809-14 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 2-ի N 01/14.2/987 -14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,950,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Արագածոտնի մարզի Վարդենիս համայնքին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08416387) 2014 թվականի մարտի 28-ին կնքված N WVA/APAR ADP/CM-14/003/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 2,950,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի Տնօրենի պաշտոնակատար
Սուրեն Սաղաթելյան
Մարտի 28, 2014թ.

# «ՀՀ Արագածոտն մարզի Վարդենիս համայնք շինարարական նյութերի մատակարարում»

## ԾՐԱԳԻՐ

<table>
<tr><td>1</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Բարելավել Արագածոտն մարզի Վարդենիս համայնքի խմելու ջրագծի վիճակը:</td></tr>
<tr><td>2</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</td></tr>
<tr><td>3</td><td>Բարեգործը</td><td>«Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.)</td></tr>
<tr><td>4</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755</td></tr>
<tr><td>5</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Վարդենիս համայնք:<br>Բնագավառը՝ <u>սոցիալական</u></td></tr>
<tr><td>6</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,950,000 (երկու միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>7</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Վարդենիս համայնքը:</td></tr>
<tr><td>8</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>28.03.2014թ. – 15.09.2014թ.</td></tr>
<tr><td>9</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>
<table>
<tr><th>Միջոցառումների նկարագրությունը</th><th>Ժամկետները</th><th>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</th></tr>
<tr><td>Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Վարդենիս համայնքի խմելու ջրագծի վերանորոգում:</td><td>մարտ - օգոստոս 2014թ.</td><td>2,950,000</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>
<table>
<tr><th>N</th><th>Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը</th><th>Ձեռք բերվող ծավալները</th><th>Նախատեսվող գինը</th></tr>
<tr><td>1.</td><td>Մետաղական խողովակ խմելու ջրի համար</td><td>Հավելված 1</td><td>2,950,000</td></tr>
<tr><td></td><td colspan="2">Ընդամենը:</td><td>2,950,000</td></tr>
</table>
Շինանյութի մատակարարումն իրականացնող կազմակերպության՝ «ԴԵԼՏԱ ԻՆՏԵԳՐԱԼ» ՍՊԸ-ի հետ կնքվել է համապատասխան պայմանագիր: Շինանյութի մատակարարումը կիրականցվի կազմակերպության հետ կնքված շինարարական նյութերի մատակարարման պայմանագրին համապատասխան՝ 2,950,000 (երկու միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ արժողությամբ:
</td></tr>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Լուսագյուղ համայնքի տեղական իշխանության կառույցների հետ համատեղ:</td></tr>
<tr><td>13</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի տարածքային զարգացման համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</td></tr>
</table>

Լիանա Սարգսյան
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Արագածոտնի մարզի զարգացման ծրագրերի ղեկավար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 315 - Ա**
**քաղ. Երևան**

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 7-ի N 3/3.8-2/5426-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 9-ի N ՎՄ/3-4/4178-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի հասցեով ստացված հավաքովի տնակների (25 հատ, 52,690 կգ ընդհանուր քաշով, 187,500 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ընդհանուր ծախսերը կազմել են 17,750 ԱՄՆ-ի դոլար, Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը տրամադրվելու է ծայրամասային շրջաններում բնակվող անապահով ընտանիքներին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող սոցիալական ծրագրերի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2014 թվականի N Մ- 316 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 4-ի N 3/3.8-2/5219-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի ապրիլի 8-ի N ՖԲ/ԱնՄ-4/2252-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 4-ի N ՎՄ/3-4/3864-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (98 տեղ, 9820 կգ ընդհանուր քաշով, 157909 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 7909 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի N Մ-010-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի կողմից
C 9634 առ 21.03.2014 հայտարարագրով ԱՄՆ-ից ստացված բեռի
ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

**Կոնտեյների համարն է՝ MSKU 970883-0: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 157909.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 7909.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 9820 կգ, տեղերի քանակը 98:**

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 432<br>140<br>34 | Զույգ<br>Հատ<br>Հատ | Տղամարդու ձմեռային կոշիկ<br>Վերնաշապիկ<br>Պոլիմերային կպչուն ժապավեն | | 14964.48<br>1297.80<br>182.24 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 432<br>140<br>40 | Զույգ<br>Հատ<br>Հատ | Տղամարդու ձմեռային կոշիկ<br>Վերնաշապիկ<br>Պոլիմերային կպչուն ժապավեն | | 14964.48<br>1297.80<br>214.40 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Տավուշի տարածաշրջան) |
| 648<br>140<br>40 | Զույգ<br>Հատ<br>Հատ | Տղամարդու ձմեռային կոշիկ<br>Վերնաշապիկ<br>Պոլիմերային կպչուն ժապավեն | | 22427.58<br>1297.80<br>214.40 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 432<br>105<br>30 | Զույգ<br>Հատ<br>Հատ | Տղամարդու ձմեռային կոշիկ<br>Վերնաշապիկ<br>Պոլիմերային կպչուն ժապավեն | | 14964.48<br>973.35<br>160.80 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 432<br>105<br>30 | Զույգ<br>Հատ<br>Հատ | Տղամարդու ձմեռային կոշիկ<br>Վերնաշապիկ<br>Պոլիմերային կպչուն ժապավեն | | 14964.48<br>973.35<br>160.80 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 414<br>123<br>40 | Զույգ<br>Հատ<br>Հատ | Տղամարդու ձմեռային կոշիկ<br>Վերնաշապիկ<br>Պոլիմերային կպչուն ժապավեն | | 14340.96<br>1140.21<br>214.40 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 432<br>140<br>30 | Զույգ<br>Հատ<br>Հատ | Տղամարդու ձմեռային կոշիկ<br>Վերնաշապիկ<br>Պոլիմերային կպչուն ժապավեն | | 14964.48<br>1297.80<br>160.80 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 432<br>105<br>30 | Զույգ<br>Հատ<br>Հատ | Տղամարդու ձմեռային կոշիկ<br>Վերնաշապիկ<br>Պոլիմերային կպչուն ժապավեն | | 14964.48<br>973.35<br>160.80 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 120 | Զույգ | Տղամարդու ձմեռային կոշիկ | | 4156.80 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 216<br>70<br>20 | Զույգ<br>Հատ<br>Հատ | Տղամարդու ձմեռային կոշիկ<br>Վերնաշապիկ<br>Պոլիմերային կպչուն ժապավեն | | 7482.24<br>648.90<br>107.20 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 216<br>70<br>20 | Զույգ<br>Հատ<br>Հատ | Տղամարդու ձմեռային կոշիկ<br>Վերնաշապիկ<br>Պոլիմերային կպչուն ժապավեն | | 7482.24<br>648.90<br>107.20 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 9820.00 | 157909.00 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 317 -Ա**
**քաղ. Երևան**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի մարտի 14-ին)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Առաքելություն Արևելք» միջազգային օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի 2014 թվականի հունվարի 15-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 17-ի N 3/3.8-1/410-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 22-ի N ԴԴ/22/395-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 25-ի N ՎՄ/3-4/2102-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդելու ազգային ծրագրին, փուլ 2» ծրագրի մասին N Մ-070-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) ծրագրի 10-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| հհ | Ապրանքի/ծառայության անվանումը | Չափման միավոր | Քանակը՝ 3 տարվա համար | Նախատեսվող գումարը, 3 տարվա համար (եվրո) |
|---|---|---|---|---|
| 1 | Պահպանակ | հատ | 4,577,480 | 106,424 |

2) ծրագրի 10-րդ կետում լրացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Ավտոմեքենա (ձեռք են բերվելու ՀՀ ներքին շուկայից) | հատ | 2 | 30,000 |

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 ապրիլի 2014 թվականի N Մ-318-Ա**
**քաղ. Երևան**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի ապրիլի 11-ին)**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԻՐԱՌԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 1-ի N 3/3.8-2/4879-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մարտի 31-ի N 02/2041-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի մարտի 27-ի N 03/07-1/3095-14, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի ապրիլի 4-ի N 1/01.3/10712-14, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի մարտի 28-ի N ՍԿ /քղ-2/1516-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-4/3716-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է .***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2014 թվականներին իրականացվող՝ 600,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի ստեղծում» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ կազմակերպության ռեկտորի կողմից

«24» մարտի 2014թ.

Արամ Հրաչի Սիմոնյան

«ԿԻՐԱՌԱԿԱՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Դրամաշնորհային ծրագրի նպատակն է ԵՊՀ-ում ստեղծել արդյունավետորեն գործող կենտրոն, որը կխթանի ԵՊՀ-ի, այլ բուհերի, գիտական ոլորտների ազգային և միջազգային համագործակցությունը, կրթական, գիտահետազոտական գործունեության և նորարարությունների զարգացումը կիրառական կենսաբանության արդիական և մեծ պահանջարկ ունեցող ոլորտներում: Ծրագրի խնդիրն է վերազինել կենտրոնի կրթագիտական լաբորատորիաները, մասնավորապես, ստեղծել Հայաստանի կրթագիտական ոլորտում ԴՆԹ- սեքվենավորման եզակի արդիական հզորություն: Ծրագրի գլխավոր թիրախն է գիտելիքների եռանկյունի կոնցեպցիայի՝ կրթության, գիտության և նորաստեղծության արդյունավետ ներդրումը և իրականցումը:<br>**Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքները.**<br>• Կստեղծվի կրթության, գիտության, գործարար ոլորտների միջև կառավարման, համագործակցության և տեղեկատվության հոսքի արդյունավետ և կայուն համակարգ:<br>• Արդիական և Հայաստանում եզակի սարքավորումներով կվերազինվեն գիտակրթական լաբորատորիաները:<br>• Կստեղծվեն հնարավորություններ մագիստրոսական ծրագրերի արդյունվետ իրականացման, դրանցում ուսանողների ընգրկվածության մեծացման և ուսանողների մոտ գործնական |



| | | |
|---|---|---|
| | | հմտությունների ձևավորմանն ուղղված: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով հարկային և մաքսային արտոնություններ ստանալ |
| 3. | Բարեգործը | Նորարարությունների մրցակցային հիմնադրամ<br>Ս. Վրացյան 73, Երևան 0070, Հեռ՝ +374 (10) 57 56 90, Էլ. փոստ cfep@arminco.com |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ<br>Ալեք Մանուկյան փ. 1, Երևան, 0025, ՀՀ<br>ՀՎՀՀ: 01506928 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ Կենսաբանության Ֆակուլտետ: Չարենցի փ. 8, Երևան, 0025, ՀՀ<br>Կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 600 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որից օրենքով սահմանված կարգով հարկային և մաքսային արտոնություններ ստանալու համար ներկայացվում են 548 665 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ բյուջեով սահմանված գործողությունները: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013թ. սեպտեմբեր-2014թ. նոյեմբերի 30<br>Քանի որ, սարքավորումների ձեռք բերման ու ներկրման աշխատանքների սկիզբը ծրագրով նախատեսվում է իրկանացնել 2014թ. ապրիլից, այդ իսկ պատճառով ծրագրում ներկայացված են 2014թ. Ապրիլի 01- 2014թ. նոյեմբերի 30 ընկած ժամանակահատվածում նախատեսված աշխատանքները: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | **2014 ապրիլ– 2014թ. հուլիս**: Սկանավորող էլեկտրոնային մանրադիտակի, ԴՆԹ սեքվենավորող սարք, լաբորատոր այլ սարքավորումների և պարագաների ձեռք բերում և ներմուծում:<br>**Ընդհանուր արժեքն է՝ 274 340 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ**, որից 140 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը նախատեսվում է ԴՆԹ սեքվենատորի, 130 000 ԱՄՆ դոլարին համարեք դրամը՝ սկանավորող էլեկտրոնային մանրադիտակի, 4340 ԱՄՆ դոլարին |

| | | |
|---|---|---|
| | | համարեք դրամը՝ լաբորատոր այլ սարքավորումների և պարագաների ձեռք բերման և ներմուծման համար: **2014թ. օգոստոս – 2014թ. նոյեմբեր:** Ինֆրակարմիր և ռաման սպեկտրոսկոպիկ կայանի, լաբորատոր այլ սարքավորումների և պարագաների ձեռք բերում և ներմուծում: **Ընդհանուր արժեքն է՝ 274325 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ,** որից 152 000 ԱՄՆ դոլարին համարեք դրամը նախատեսվում է ինֆրակարմիր և ռաման սպեկտրոսկոպիկ կայանի, 35000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը՝ լաբորատոր պարագաների, 87325 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը՝ մանրէաբանական բոքսերի, կշեռքների, թորման սարքի և լաբորատոր այլ սարքավորումների ձեռք բերման և ներմուծման համար: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայություննների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Լաբորատոր սարքավորումների և պարագաների ձեռք բերում և ներմուծում: Ընդհանուր արժեքն է ՝ 548 665 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:Մանրամասն ներկայացված է 9-րդ կետում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | 1. Ընթացիկ այցեր և ծրագրի իրականացման ընթացքի գնահատում ՆՄՀ-ի, Համաշխարհային բանկի փորձագետների, ՀՀ ԿԳՆ մասնագետների կողմից: 2. Հաշվետվությունների ներկայացում ՀՀ ԵՊՀ միջազգային համագործակցության և կրթության բաժիններին ըստ ընդունված կարգի: 3. Ֆինանսական և ակադեմիական հաշվետվության ներկայացում ՀՀ Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ին: 4. Հաշվետվություններ ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Ծրագրի համակարգող՝ Հովհաննիսյան Նելլի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 319 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՄԱՔՈՒՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» WE20130516 ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 26-ի N 3/3.8-2/4591-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մարտի 24-ի N 02/1804-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի մարտի 26-ի N 07/07.1/1517-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 25-ի N ՎՄ/3-4/3296-14, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2014 թվականի մարտի 25-ի N 1/3/1-1/1273-14, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի մարտի 27-ի N 01/14.1/935-14, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի մարտի 25-ի N 101/104.3.2/1318-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Բարեգործական որակել «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության (ՀՎՀՀ՝ 01526777) կողմից իրականացվող՝ 173,359 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE20130516 ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեդի Պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109451) 2013 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության 13 համայնքում խմելու ջրի ջրամատակարարման խողովակների մատակարարման,



մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 34,782,200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) անհատ ձեռնարկատեր Արմեն Մաթևոսյանի հետ (ՀՎՀՀ՝ 47764653) 2013 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության համայնքներում 26 ցայտաղբյուրի մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 5,703,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի, Արագածոտնի ու Լոռու մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

| | |
|---|---|
| [illegible] կապված կազմակերպա-կան ծախսերը | [illegible] Հայաստանյան Ներկայացուցչությունը վարչական ու կազմակերպ-չական ծախսերի համար հարկային արտոնություններ չի նախատեսում ստանալ, քանի որ այդ ծախսերը չեն կատարվելու նվիրատվության գումարներից: *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչության գրասենյակի հետ կապված կոմունալ, կապի, վարձակալության ծախսերը նույնպես չեն վճարվելու նվիրատվության գումարներից: Ծրագրի համար ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատելու է ջրային ինժեները և հիգիենայի գծով մասնագետը, որոնց ծառայություններից առաջացող եկամտային հարկը Ներկայացուցչությունը վճարելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: |
| 12. Համագործակցությունը պետական կառավարման, տե-ղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակեր-պությունների հետ | *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը աշխատելու է անմիջապես յուրաքանչյուր համայնքի, ինչպես նաև համապատասխան նախարարությունների և մարզպետարանների հետ: |
| 13. Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկո-ղության մեխանիզմների նկա-րագրությունը | Ծրագրի վերահսկողությունը իրականացվելու է Դոնորի՝ *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի և Կորպորացիայի լիազորված անձի՝ Չարլի Ռեդիի կողմից: Ծրագրի կատարողը հաշվետու է Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ծրագրի իրականացման ընթացքում և դրա ավարտից հետո սահմանված կարգով և ժամկետներում Հանձնաժողովին ներկայացնելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններ և տեղեկատվություն: Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից նշանակված անձի մասնակցությունը ծրագրի վերահսկո-ղության իրականացման գործընթացում մեծապես կողջունվի: |

Ծրագրի լիազորված անձ　　　　Չարլի Ռեդի

Armenian Representation
01526777

4/10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 ապրիլի 2014 թվականի N Մ-320-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 14-ի N 3.1/3.8-2/3774-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի մարտի 17-ի N 03/07-1/2582-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 18-ի N ՎՄ/3-4/3055-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տեսական ֆիզիկայի տարածաշրջանային ուսումնական համացանց» նախագծի շրջանակներում Գերմանիայի Բոնն քաղաքի համալսարանի կողմից նվիրաբերված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի՝ («Polycom HDX-7000-720» սարքն իր բաղադրամասերով՝ 1 տեղ, 14 կգ ընդհանուր քաշով, 5,865 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ 280 եվրո փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 321 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 28-ի N 3/3.8-2/4775-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մարտի 28-ի N ԴԴ/22/2900-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-4/3714-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռները (թեստ հավաքածուներ՝ 17 տեղ, 154 կգ քաշով, 20,176.38 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,901.6 եվրո և դեղեր՝ 1 տեղ, 210 կգ քաշով, 49,977.6 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 322 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N Մ-278-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 2-ի N 3/3.8-2/4966-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի ապրիլի 1-ի N ԴԴ/22/3004-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-4/3724-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» կորպորացիայի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ից ստացված բեռները (ֆակոէմուլսիֆիկացիոն մեքենայի պարագաներ (խողովակներ,ծայրադիր, լար), վիրահատական դանակներ՝ 2 տեղ, 6 կգ քաշով, 3,594 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 93 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, և ֆակոէմուլսիֆիկացիոն մեքենայի պարագա (ձող), օֆթալմոսկոպի լամպեր, ֆլին սկլերալ դեպրեսոր օղակով, ակնաբուժական վիրահատական գործիքներ և պարագաներ՝ 1 տեղ, 66 կգ քաշով, 5,947 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 1,414 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (վեցերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-278-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի և դեկտեմբերի 6-ի NN Մ-809, 1180-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ապրիլի 2014 թվականի N Մ- 323 -Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 13-ի N 3/3.8-2/3769-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մարտի 13-ի N ԴԴ/22/2206-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 18-ի N ՎՄ/3-4/3062-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ո ւ մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղ՝ 1 տեղ, 1,7 կգ քաշով, 2784 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 ապրիլ 2014 թվականի N Մ- 324 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N Մ-278-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 20-ի N 3/3.8-2/4139-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 24-ի N ՎՄ/3-4/3210-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» կորպորացիայի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ից ստացված բեռները (էնդոսկոպ՝ իր էկրանով և պարագաներով՝ 3 տեղ, 33.5 կգ քաշով, 33,444.43 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ 604.43 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, և վիրահատական պարագաներ՝ 2 տեղ, 4.5 կգ քաշով, 1,000.8 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ 39.55 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (վեցերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-278-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի N Մ-809-Ա և դեկտեմբերի 6-ի N Մ-1180-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 325 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 25-ի N 3/3.8-2/4458-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մարտի 21-ի N ԴԴ/22/2584-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 25-ի N ՎՄ/3-4/3266-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք՝ 2 արկղ, 17կգ ընդհանուր քաշով, 1,416.05 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 300 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 326 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 25-ի N 3/3.8-2/4457-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մարտի 24-ի N ԴԴ/22/2578-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 25-ի N ՎՄ/3-4/3277-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Բելգիայից ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 100 մգ, 2 տեղ, 1.6 կգ ընդհանուր քաշով, 784 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 115.24 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 ապրիլի 2014 թվականի N Մ- 327 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 27-ի N 3/3.8-2/4711-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի մարտի 26-ի N ԴԴ/22/2711-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-4/3327-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (ռեագենտների հավաքածու (2հատ) լաբորատոր ախտորոշման համար՝ 1 տեղ, 1.4կգ ընդհանուր քաշով, 10 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 60 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

